

Վ. Գ. ՎԱՐԻԱՆՅԱՆ

ՄԻ ԷՋ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆԻ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայտնի է, որ XIX դարի առաջին կեսին Շեքսպիրի անունը հաճախ է հիշատակվել հայ պարբերականներում և գրքերում, իսկ 60-ական թվականներին լուրջ քայլեր են արվել նրա գլուխգործոցները հայերեն թարգմանելու ուղղությամբ: 70-ական թվականներին նրանով հետաքրքրվողների շրջանակը ավելի լայնացավ: Ինչպես հայտնի է, կային արդեն Շեքսպիրի երկերի թարգմանիչներ, դերակատարներ և ընթերցողներ, բայց դրանց թիվը դարձյալ սակավ էր:

Անգլիական դրամատուրգով զբաղվել է նաև նշանավոր հայագետ Գրիգոր Խալաթյանը: Ահա՛ թե ինչ են պատմում այդ մասին գրված, նրա գրչին պատկանող վավերագրերը:

Խալաթյանը մանուկ հասակից սկսած մի արտասովոր սեր է ունեցել հումանիտար գիտությունների, հատկապես լեզվի, գրականության և պատմության նկատմամբ: «Շնորհակալ եմ այն համակրության համար,— գրել է Գր. Խալաթյանը նշանավոր հրապարակախոս Հ. Առաքելյանին՝ ի պատասխան շնորհավորական այն նամակի, որով վերջինս ողջունում էր նրա մուտքը հայագիտության մեջ,— որ հայտնում եք իմ նոր ասպարեզ մտնելուս առթիվ. իմ բոլոր ուժս և եռանդս ուխտել եմ այդ ասպարիզի համար, որ դեռ մանկական օրերիցս ամենից ավելի սիրելի, ամենից մոտ է եղած իմ սրտին: Իսկ եթե կարողանամ գեթ մի փոքր ծառայություն անել մեր անմշակ պատմության և մատենագրության ուսումնասիրության համար,— երիցս երջանիկ պիտի համարեմ ինձ միշտ»¹, Ի դեպ, Գր. Խալաթյանը գիտության բնագավառը մտավ դեռևս ուսանողական հասակից, 1883 թ., հրատարակելով «Ղազար Փարպեցին և գործք նորին» երկասիրությունը:

Աղբյուրները ցույց են տալիս, որ Գր. Խալաթյանը, տակավին մանուկ, ընթերցել է եվրոպական և ռուս առաջնակարգ գրողների ստեղծագործությունները, այդ թվում Գյոթեի, Պուշկինի, Հայնեի, Լերմոնտովի, Շիլլերի, Հյուգոյի, Շեքսպիրի երկերը: Այս գրողներից նա կատարել է թարգմանություններ, նրանց ազդեցությամբ գրել է բանաստեղծություններ, ինչպես և արձակ էջեր: Այս գրվածքները, ճիշտ է, գեղարվեստական տեսակետից կատարյալ չեն, բայց վկայում են Լազարյան ճեմարանի գիշերօթիկ սանի հետաքրքրությունների շրջանակների, աշխատասիրության, նրա մանկական հարուստ ներքնաշխարհի և նախասիրությունների մասին:

Իր իսկ ասելով, Գր. Խալաթյանը 12—13 տարեկան հասակում ընթերցում է «Անգլո-սաքսոն հսկային»՝ Շեքսպիրին: Մի երեք տարի անց, 16 տարեկան

¹ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Համարձում Առաքելյանի ֆոնդ, № 791 (այսուհետև՝ ԳԱԹ):

պատանին նորից է անդրադառնում դրամատուրգի երկերի ընթերցանությանը, այս անգամ արդեն ոչ որպես սոսկ ընթերցող, այլ, եթե կարելի է այսպես ասել, ուսումնասիրող: Ինչպես նշվեց, այդ ժամանակ Շեքսպիրով զբաղվող մտավորականների և ընդհանրապես նրան ընթերցողների թիվը մեծ չէր: Հանճարեղ գրողի ստեղծագործությունները դեռ լայն տարածում չէին գտել հայ գրականության մեջ: Նույնիսկ դրանից էլ 20 տարի հետո հենց հալաթյանի կարծիքով, նա դեռ վաղ էր մտածել Շեքսպիրի ժողովրդայնացման մասին հայ իրականության մեջ:

Ահա այս պարագաներում մի խանդավառ հայ պատանու գրի առած դատողությունները նրա մասին պետք է դիտվեն որպես ուշագրավ երևույթ:

Շեքսպիրյան ընթերցանությունների ճաշակը պատանի Գրիգորի մոտ պետք է որ առաջացած լինի նրա ուսուցիչ, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ էմինի ազդեցությամբ: Հայտնի է, որ անվանի մանկավարժը իր սաներին ոճաբանություն դասավանդելիս օրինակներ է քաղել Շեքսպիրի երկերից: Այդ նպատակով դրամատուրգից թարգմանել է 36 տող: Ավելացնենք, որ Գր. հալաթյանը ճեմարանում ուսանելիս, ինչպես և հետո, առանձնահատուկ սեր ու հարգանք է ունեցել Մ. էմինի հանդեպ, փոխադարձաբար վայելել է նրա համակրանքն ու հովանավորությունը, հետևել է նրա բոլոր խորհուրդներին ու ցուցումներին²: Հետևապես, անկասկած է վերջինիս ազդեցությունը Գր. հալաթյանի վրա՝ շեքսպիրյան ընթերցանությունների առնչությամբ ևս:

Հիշյալ վավերագրերից մեկը Գր. հալաթյանը գրել է, ինչպես ասվեց, 16 տարեկան հասակում: Փաստաթուղթը հետաքրքրական է նախ այն տեսակետից, որ ցույց է տալիս պատանի հալաթյանի գիտելիքների հարուստ պաշարը, նրա իմացության համեմատական աստիճանը՝ հատկապես հայ և օտար պատմության ու գրականության բնագավառներում և երկրորդ, ամենակարևորը՝ Շեքսպիրի մասին արտահայտած նրա ճշմարտացի դատողությունների տեսակետից:

Հալաթյանի գրչին պատկանող այս արժեքավոր փաստաթուղթը վկայություն է այն մասին, որ 70-ական թվականներին, թերևս դրանից էլ առաջ, Շեքսպիրի երկերը մտել են հայ աշակերտների շրջանը, քայլ առ քայլ տիրելով նրանց մտքերին: Հենց այդ սերունդն էր, որ հետագայում առաջ տարավ շեքսպիրագիտությունը հայ իրականության մեջ:

Ահա՛ մի էջ այդ արժեքավոր վավերագրից:

«Ես՝ առաջ ևս և շատ առաջ սիրով կարդում էի Շեքսպիրի գրվածքները, բայց նորա այն ազդեցությունը չունեին իմ վերա, ինչպես այժմ. այժմ որ կարդում եմ, սաստիկ ոգևորվում եմ, սիրտս բարձրանում է, հոգիս ուրախանում, մանավանդ քաղց եմ զգում, երբ մի խոր փիլիսոփայական նախադասություն կամ ասացված նույն բույսին չեմ հասկանում, այլ կրկնում եմ մի քանի անգամ ու վերջը հասկանում եմ: Ո՞րքան մեծ ու բարձր <ես> ոհ-ոհ Շեքսպիր, ի՞նչ մուսա էր քեզ թելադրում այս երկնից իջած խոսքերը... Մի՞թե Ողիմպիան ... Կարդալով և քննելով՝ բավականին մոտ ծանոթացա այս երեւելի քան մյուս բոլոր աշխարհի բանաստեղծները և վեր հեղինակի հետ, շատ ոգևորվեցա, մանավանդ նորա պատմական ողբերգություններով... բայց տես, որ այստեղ մի այլ միտք տիրեց իմ գլուխս... Չունենալով ո՛չ մի շնորհքով

² Տե՛ս «Էջմիածին», 1950, հուլիս-օգոստոս, էջ 50:

գրած ողբերգություն՝ գոնյա ազգային պատմությունից (բայց հարուստ անպետք, դատարկ, խաղճված, ճղճված «ուրբերգություններով»), որով պատմությունը շատ հարուստ, այո, շատ հարուստ <է>, քան մյուս ականավոր տերությունը Եվրոպիո (բացի Ֆրանսիայից, Իտալիայից, Իսպանիայից և Գերմանիայից), ես միտս դրի (լավ լսիր, միտս դրի), սովորել քննել Շեքսպիրի բոլոր թատրոնական աշխատությունքը և նոցա ձևերին, ևս համեմատ և պայմաններին, կալմել (ստեղծել) հայոց ողբերգությունը՝ որպես Տիրան թագավոր, Արշակ Բ, Պապ, որոնց նյութը առավել հարուստ է եղբերգության համար, քան Շեքսպիրի «Ռիքարդ III-ը», «Հենրիխ VIII-ը»:

Ուրեմն ես մտքումս դրել եմ գրել ողբերգությունը, հետևելով Շեքսպիրին, ուրիշ խոսքով լինել աշակերտ Շեքսպիրին... Ի՞նչ է, միթե արժանի չէ այսպիսի մարդը հազարավոր աշակերտներ ունենալ և ունեցավ, և կունենա միշտ, քանի աշխարհում կլինեն հասկացող խելոք մարդիկ»³:

Հայտնի է, որ Գր. Խալաթյանը ողբերգություններ չգրեց, նրան գայթակղեցրին հալազիտության անհայտ հորիզոնները, որոնց ուսումնասիրությունը ոչ պակաս արժեքավոր ներդրում էր հայ մշակութային կյանքում:

Հիշյալ մտորումից անցել էր ուղիղ 20 տարի: Գր. Խալաթյանը ուներ արդեն գիտնականի համբավ, անվանի մանկավարժ էր Հալաթյան ճեմարանում, մի շարք գրքերի հեղինակ, երբ մի շատ հետաքրքրական դիպվածով նորից անդրադառնում է Շեքսպիրին:

Այսպես. 1894 թ. դեկտեմբերին Մոսկվա է ժամանում Շեքսպիրի անվանի թարգմանիչ Հովհաննես Մասնհայանը: 1894 թ. դեկտեմբերի 2-ին պարսից նասրեղդին շահը՝ Ամիր խան Սարգարի գլխավորությամբ մի արտակարգ դեսպանություն է առաքում Պետերբուրգ՝ նիկոլայ I-ի գահակալությունը շնորհավորելու համար: Դեսպանության կազմում էր արքունական թարգմանիչ Մասնհայանը: Դեսպանությունն իր պաշտոնական պարտականությունը կատարելուց հետո Պետերբուրգից Թեհրան վերադարձի ճանապարհին մի քանի օրով կանգ է առնում Մոսկվայում: Հ. Մասնհայանը, իր սովորությանը հավատարիմ, այցելում է տեղի հայ մտավորականներին, լինում է Հալաթյան ճեմարանում և ծանոթանում է մի խումբ մտավորականների՝ այդ թվում Գ. Քանանյանի, Վ. Սուրենյանցի, Կ. Կուսիկյանի, Գր. Խալաթյանի և այլոց հետ: Ի դեպ, «գրագետների խմբի» հրավերով պարսից դեսպանությունը, այդ թվում և Հովհաննես Մասնհայանը, ներկա է լինում Մոսկվայի ազնվականների տանը կազմակերպված հայկական երեկույթին (դեկտեմբերի 17): Ի պատիվ Հ. Մասնհայանի, Գ. Քանանյանի տանը հատուկ հյուրասիրություն է կազմակերպվում, որին ներկա են լինում հիշյալ անձնավորությունները:

Հյուրասեղանի շուրջը անկաշկանդ մտերմական զրույց է տեղի ունենում, որտեղ Հ. Մասնհայանը «գաղափարներ» է փոխանակում զանազան հարցերի շուրջ: Զրույցի ընթացքում պատվավոր հյուրը անդրադառնում է իր շեքսպիրյան թարգմանություններին:

Անվանի թարգմանիչը հայտնում է, որ ինքը մտադիր է մոտակա 8—10 տարիների ընթացքում թարգմանել և հրատարակել Շեքսպիրի բոլոր պիեսները: Այդ նպատակի իրագործման համար նա խնդրում է ներկա գտնվող գրականագետների և բանասերների գործնական օգնությունը: Գր. Խալաթյան-

3 ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆ., ր. 3, N 8 (այսուհետև՝ ԳԽ)։

նր, ինչպես ասվեց, պատանեկան հասակից Շեքսպիրի պաշտամունքն ուներ, պատրաստակամություն է հայտնում բոլոր միջոցներով աջակցել Մասեհյանին՝ գլուխ բերելու այդ հայրենանվեր մտադրությունը: Գր. Խալաթյանը հայտնում է նաև, որ իրենք նախաձեռնել են Մոսկվայում հիմնել մի հայկական պարբերական, որի համար արդեն նախապատրաստություններ են տարվում: Հենց այդ պարբերականում էլ, — ավելացնում է բանասերը, — սիստեմատիկաբար կտպագրվեն Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունները⁴:

Հ. Մասեհյանը հանձին Գր. Խալաթյանի տեսնում է բազմակողմանի զարգացած, եռանդով լի մի մտավորականի, որը կարող է սատար լինել իր նպատակի իրականացմանը:

Այս հանդիպումից մոտ մեկ ամիս անց, նամակագրական կապ է հաստատվում երկու նշանավոր գործիչների միջև: 1895 թ. հունվարի 31-ին Գր. Խալաթյանը գրում է առաջին նամակը Թեհրանի իր բարեկամին՝ Նամակի սևագիր օրինակից երևում է, որ նա եռանդուն նախապատրաստվում է պարբերականի հիմնադրմանը: Պարբերականը իր բաժանմունքները պետք է ունենար Թիֆլիսում, Թեհրանում, Կ. Պոլսում: Նա պետք է լիներ համահայկական մի օրգան, որն իր շուրջը համախմբելով ցրված հայ գրական ուժերին, ասպարեզ հաներ մի այնպիսի գրական շարժում, որ հայ իրականությունը մինչ այդ դեռևս տեսած չէր: Ահա՛ թե ինչ է ասված այդ մասին նամակում:

«...Այս ժամանակամիջոցում (մեկ ամսվա—Վ. Վ.) բավական բան կարողացանք աջողացնել այն ծրագիրներից, որոնց մասին խոսեցինք Ձեզ հետ՝ վերաբերությամբ Մոսկվայում հիմնվելիք հայ օրգանի և որոնց դուք լիապես համաձայնեցիք: Մեր դիտավորությունն <է> գրականական ուղղությամբ մի լուրջ ամսաթերթ հրատարակել կարևոր բաժանումներով: ...Բարեբախտաբար մեր ամսաթերթի խնդիրը աջողված է, մնում են մի քանի ձևականություններ, որոնց վերջնական որոշումից հետո անմիջապես հեռագրով կիմացնեմ Ձեզ: ...Ամսաթերթի լայնածավալ տարածման նպատակուն ոգտավետ ենք համարում հայության գլխավոր կենտրոններում (Թիֆլիս՝ Անդրկովկասի թեմ, Թեհրան՝ պարս<կա>հայեր<ի> ու հնդկահայերի <թեմ>, Պոլիս՝ տաճկահայերի թեմ) գործակալություններ հիմնել, որոնք ոչ միայն կաշխատեն բաժանորդներ գտնելու, այլև, որ գլխավորն է, իբրև խմբագրության բաժիններ՝ որպես ամեն կողմ ցրված մեր գրական ուժերի <հետ> մշտական կապեր հաստատելու նպատակով, հոգ կտանին ամսաթերթի համար շարունակ պատշաճավոր նյութեր հայթհայթել իրենց գրական շրջաններից՝ հանձնելով հասուն ուժերին, ինքնուրույն խմբագրական աշխատություններ պատրաստելու, մշտական թղթակցություններ կաղմելու համար»⁵: Նամակի մի ուրիշ տարբերակում Գր. Խալաթյանը հայտնում է, որ բաժանմունքի տնօրենը պետք է լինի խմբագրության անդամ, որը պետք է ամսագրի համար հողվածներ, աշխատություններ, թարգմանություններ և ինքնուրույն գրվածքներ ընդունի, ներկայացնելու համար Մոսկվայում գտնվող գլխավոր խմբագրությանը⁶: Հետաքրքրական է, որ ամսագիրը պետք է ունենար բաղմաթիվ բաժիններ, «հարմարություններ», ինչպես ասում է նա, որի միջոցով էլ իրագործվելու էր շեքսպիրյան թարգմանությունների հրատարակությունը: Սևագիր նամակի

⁴ ԳԱԹ, ԳԽՖ, Բ. 5, № 97գ:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

տարբերակում այս մասին գրված է. «...Այժմ մեր բոլոր աչքն ու միտքը ամսաթերթ հիմնելու վրա է, որ, շնայելով ղեկարություններին, բարերախտաբար աջողվում է։ ...Բացի բազմաթիվ հարմարություններից, որ կունենա ամսաթերթը, ի միջի այլոց նա շատ կնպաստե և Ձեր դիտավորությանը՝ յուրաքանչյուր տարի Շեքսպիրի 3—4 դրամաներն ի լույս ընծայել և 7—8 տարում բոլոր երկերը, որոնց փայլուն սկիզբը արդեն արած էր «Համլետի» հրատարակությանմը⁷։ Գր. հալաթյանը ավելացնում է, որ ամսագրում տպագրվելուց հետո, պիեսների առանձնատիպ, ինչպես ինքն է ասում՝ արտատիպ օրինակները իբրև առանձին գրքեր կարող են վաճառվել, դա կնպաստի նաև թարգմանությունների լայնածավալ տարածմանը։ Գր. հալաթյանը խնդրում է թարգմանչին ամսագրին վերաբերող իր դիտողությունները հայտնել. «Շնորհակալ կլինեմք,— գրում է նա,— եթե Ձեր նամակում հաղորդեիք ամսաթերթին վերաբերվելիք Ձեր հայացքները և դիտակետը, որոնցից ուրախությամբ կօգտվենք, եթե հարմարություն և հնար լինի»⁸։

Հալաթյանը առաջարկում է նաև, որ Հ. Մասեհյանը ստանձնի պարբերականի Թեհրանի բաժանմունքի տնօրինությունը, սակայն թարգմանիչը հայտնում է, որ ինքը, պաշտոնի բերումով, երևի հեռանա Թեհրանից, ուստի այդ պարտականությունը վերցնել չի կարող։

Հետաքրքրություն է առաջ բերել Հ. Մասեհյանի պատասխանը Մոսկվայի իր բարեկամի հարցումին ամսագրի ուղղության և այլ խնդիրների շուրջը, ինչպես և նրա կարծիքը հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության վիճակի և այդ գործի բարելավման ուղիների մասին։ Հմուտ թարգմանիչը անհրաժեշտ է համարում, որ հրատարակվելիք ամսագիրը նվիրված լինի հատկապես թարգմանական գրականությանը, ունենալով հետևյալ նկատառումները։ Մեր գրականությունը նոր է սկսում ծաղկել, նրա զարգացումը պետք է տեղի ունենա ականավոր գրողների համամարդկային գաղափարների ազդեցության ներքո, ինչպես այդ կատարվել է հենց եվրոպական երկրներում, հետևապես թարգմանությունը մի միջոց է հաղորդակից լինելու հիշյալ գաղափարներին։ Դրան հետևում է այն ճշմարտությունը, որ թարգմանական գործը ինչպես որ կա, «անկերպարան» վիճակում, թողնել չի կարելի։ Ամեն մարդ չէ, որ պետք է թարգմանություն կատարի և ամեն գիրք չէ, որ պետք է թարգմանվի։ Անտարակույս է, որ այդ պատահականությունները կարող են բացասական ազդեցություն գործել նորաստեղծ գրականության վրա։ Մասեհյանը առաջարկում է նաև կազմել հատուկ հանձնաժողով, որը նախ՝ կմշակի որոշ կանոններ թարգմանչական խնդիրների շուրջը և երկրորդ՝ եվրոպական գրականությունից ընտրություններ կկատարի, թե ինչ հեղինակներից, ինչ գրքեր թարգմանել, կհաստատի այդ գրքերի ցուցակը, որով և կարելի կլինի առաջնորդվել։ «...Այդ կերպով,— ավելացնում է թարգմանիչը,— Դուք և Ձեր հետ մեր թարգմանիչները, կարող եք ընթանալ մի շավիղով և ունենալ մեծ ազդեցություն մեր գրականության վրա»⁹։ Նա խորհուրդ է տալիս նաև, որ եթե ամսագրի հիմնումը չհաջողվի, միանալ «Մուրճին» և բանալ թարգմանության առանձին բաժին։

⁷ Նույն տեղում։

⁸ Նույն տեղում։

⁹ Նույն տեղում, ր. 5, № 805։

Մի ուրիշ նամակում նա առաջարկում է իր շարադրած հիշյալ «պրոգրամով» մի ամսաթերթ հիմնել Թեհրանում. «Եթե միայն գտնվեն բավական աշխատակիցներ Ձեր միջից»:

Գր. Խալաթյանը, ինչպես ասում է Մասեհյանը, խնդրել էր իրեն ուղարկել շեքսպիրյան թարգմանություններից՝ Մոսկվայում տպագրելու համար: Եվ ահա թարգմանիչը 1895 թ. ապրիլին ուղարկում է «Մակբեթը», խոստանալով ուղարկել նաև մի առաջաբան—«էտյուդ «Մակբեթի» վրա»: «Այսօրվա փոստով ուղարկում եմ իմ «Մակբեթը»,— գրում է Մասեհյանը 1895 թ. ապրիլի 17-ի նամակում,— թեև մի քիչ ուշ: Բայց ինքս օրինակեցի և ինչ-ինչ սրբագրություններ նորից կատարեցի. ուրեմն հաճեցեք հսկել ձեռագրի վրա, որ մի գուցե կորսվի»¹⁰:

Նա մի այլ նամակում խնդրում է Խալաթյանին կարծիք հայտնել թարգմանության լեզվի և ոճի մասին. «Ասացեք ինձ, ինչ է Ձեր գաղափարը իմ «Մակբեթի» մասին, եթե աչքից անց եք կացրել և եթե դիտողություն ունենաք՝ ուրախությամբ կլսեմ»¹¹:

Այժմ անդրադառնանք Գր. Խալաթյանի 1895 թ. նոյեմբերի 20-ի նամակին: Ամսաթերթի հիմնադրումը չի հաջողվում, կառավարությունը մերժում է արտոնություն տալ մի հայկական պարբերականի: Ինչպես հայտնի է, այդ ժամանակներում միջազգային հարաբերությունները՝ Մերձավոր արևելքի հարցում, մի նոր գունավորում են ստանում: Հայկական հարցի «լուծման» նախաձեռնությունը անցել էր Անգլիային, որի սլատճառով էլ գլուխ էր բարձրացնում լոբանովյան ռուսական քաղաքականությունը հայերի նկատմամբ: Հայերի կուլտուր-լուսավորական գործունեության առանց այն էլ նեղ շրջանակները ավելի են սեղմվում:

Ահա թե ինչպես է Գր. Խալաթյանը բնութագրել քաղաքական այն մթնոլորտը, որ հնարավոր չի դարձնում ամսագրի հրատարակությունը: «Գուցե առանց իմ ներկա նամակիս, այլ նաև երկարատև ու տաղտուկ լուծությունիցս արդեն գուշակած կլինեք մեր փայփայած ծրագրի անհաջողության հանդիպելու մասին: Քաղաքական հանգամանքները Ձեզ լավ հայտնի են, անտեղյակ չեք լինիլ նաև այն հայեցակետին, որով այժմ վերաբերվում են այստեղ մեզ վերա: Քիչ կասեմ, շատ հասկացեք. ժամանակը ծանր է, պետք է սպասել ավելի պատեհ օրերի»¹²: Պարբերականի ձախողումն էլ արգելակում է գլուխ բերելու շեքսպիրյան այդ թարգմանության հրատարակության գեղեցիկ ծրագիրը:

Մասեհյանը, ի վերջո, սրտի ցավով անշուշտ, հաշտվում է ամսագիր չունենալու մտքին, բայց չի հրաժարվում իր թարգմանությունները Մոսկվայում հրատարակելու գաղափարից: Իր քարեկամը բացատրում է դրանց հնարավորությունն ու ձեռնտու լինելը: «Մոսկվայում անտարակույս ավելի նուրբ և դեղեցիկ կարելի է տպագրել Ձեր ուղիեսները,— ի պատասխան Մասեհյանի հարցին՝ բացատրում է Խալաթյանը,— քան Թիֆլիս, որ տպագրությունը (1 անոնր.) ավելի էր, քան հետ այսօրիկ շատ երկրների վերաբերությամբ, նույնպես անկասկած է, որ միայն այնպիսի կենտրոններում, ինչպես Պետերբուրգ, Մոսկվա հնարավոր սմենարնտիք նկարներ պատրաստել տալ և տպագրել, սակայն

¹⁰ Նույն տեղում, № 506.

¹¹ Նույն տեղում, № 508.

¹² Նույն տեղում, № 970.

ավելի էժան, քան Թիֆլիս, ուր տպագրությունը սովորաբար անհաջող է կատարվում, վերջապես թղթի կողմից էլ ևս, որը աննշան, ընտիր չէ, Մոսկվայի պայմանները ավելի ձեռնտու են»¹³։ Ավելի գործնական հողի վրա դնելով հրատարակության գործը, նա ավելացնում է, որ անհրաժեշտ է պիեսները հրատարակել պատկերազարդ (յուրաքանչյուր գործողության համար թերևս մեկ պատկեր), որը կարելի է վերցնել Շեքսպիրի նույնանման հրատարակությունից։ Անվանի գրականագետը խորհուրդ է տալիս՝ այնուհետև, որ յուրաքանչյուր պիեսին կցվի առաջաբան՝ կարևոր մատենագրական տեղեկություններով հանդերձ¹⁴։

Ի դեպ, թարգմանիչն իր բարեկամի այս կարևոր ցուցումը օգտագործեց հետագայում, տարիներ անց, երբ վիեննայում Մխիթարյանների միջոցով տպագրել տվեց (1921—23) Շեքսպիրի գլուխգործոցները։

Հալաթյանը խորհուրդ է տալիս նաև թարգմանությունները հրատարակել հատորներով. «ամփոփելով յուրաքանչյուրի մեջ 4—6 պիես, նայելով համարությանը, որն ավելի ուշադրություն կգրավե հայ գրականության մեջ. իմ խորին համոզմունքով կտարածվի էլ, քան մանրիկ տետրակներով»¹⁵։

Գր. հալաթյանը գիտակցում է, անշուշտ, որ դեռ վաղ է երագել Շեքսպիրի ժողովրդականացման մասին. հայ ընթերցողը և հանդիսատեսը դեռևս դժվարությամբ են ընկալում նրա մտքերն ու պատկերները, ըստ արժանվույն չեն պատկերացնում նրա էպոխայի ոգին։ Բայց դարձյալ պնդում է այդ հրատարակության վրա, փայփայում է Մասեհյանի այդ նախաձեռնությունը, համոզված, որ ոչ հեռու ապագայում բրիտանական հանճարը հանրամատչելի կդառնա նաև հայ հասարակության համար։

Գր. հալաթյանը գրում է, որ իրենից կախված ամեն ինչ կանի շեքսպիրյան թարգմանությունները հրատարակելու ուղղությամբ։ «Գալով ամեն կողմից գեղեցիկ ծրագրի գործադրության,— ասում է նա,— նախապես հայտնում եմ Ձեզ, որ եթե կարողանամ ինքս որևէ կերպով ձեռնադրել ու օգտավետ լինել դորա աջողության՝ ամենայն ուրախությամբ կանեմ ձեռքիցս եկածը, թե մեր շատ պատվական բարեկամության և թե մանավանդ այն ջերմ սիրո, որ տածում եմ հայրենի գրականության բարգևաճանքը»¹⁶։

Մասեհյանը խնդրում է իր պատվական բարեկամին մանրամասնություններ հաղորդել հրատարակությունների պայմանների և հնարավորությունների մասին, ինչպես նաև տեղեկություններ դրամական ծախսերի շուրջը։ Նույն նամակում Գր. հալաթյանը առաջարկում է փորձի համար տպագրության հանձնել «Մակբեթը», որով պարզ կդառնա մնացած պիեսների հրատարակության բոլոր հանգամանքները։ Խոստանում է նաև անձամբ վերահսկողություն ունենալ «տպագրության վրա»։ «Երբ որ պատրաստ լինի «Մակբեթը»,— շարունակում է նա,— կուղեք առանձին լույս ընծայեք, կուղեք՝ ըստ այնմ 3—4 պիես միասին»¹⁷։

Կարևոր ենք համարում այստեղ նշել նաև Գր. հալաթյանի կարծիքը «Մակբեթի» թարգմանության լեզվի և ոճի վերաբերյալ, որը, ինչպես նշվել

¹³ Նույն տեղում։

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում։

¹⁷ Նույն տեղում։

է, խնդրել էր Մասեհյանը: Խալաթյանը գրում է, որ պիեսի թարգմանությունը գրեթե անթերի է, միայն տեղ-տեղ կարելի է վիճել, որոնք, սակայն, աննշան են: Ավելացնենք, որ «Մակբեթի» (ինչպես և մյուս պիեսների) տպագրությունը Մոսկվայում չի հաջողվում: Թարգմանչի խնդրանքով Խալաթյանը ետ է ուղարկում այն իրենց ընդհանուր բարեկամին՝ Հ. Առաքելյանին:

* *
*

Գրիգոր Խալաթյանի և Հովհաննես Մասեհյանի բարեկամության մինչ այժմ անհայտ մնացած պատմությունը մեր մշակույթի պատմության մի փոքրիկ դրվագն է: Այն բացահայտում է Շեքսպիրը թարգմանելու և մասսայականացնելու ուղղությամբ նրանց եռանդուն գործունեությունը, ինչպես և այդ գործում եղած դժվար, երբեմն էլ անհաղթահարելի արգելքները, արգելքներ, որոնք արդյունք էին այն անուպաստ պայմանների ու միջավայրի, որի մեջ բնթանում էր հայ մշակույթի զարգացումը:

Շեքսպիրագիտական մտքի զարգացումը հայերի մեջ ուշագրավ թեման արժանի է մանրազնին հետազոտության, քանի որ այն ընդգրկում է անցյալի հայ մտավորականության մի լայն շրջան: Ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանի անունն անմիջապես չի առնչվում Շեքսպիրի անվան հետ, սակայն նա, ինչպես նշվեց, շատ ջանք ու աշխատանք է թափել հանճարեղ գրողի երկերը հայ իրականության մեջ տարածելու գործում:

В. Г. ВАРДАНЯН

ДРУЖБА ГРИГОРА ХАЛАТЯНА С ОГАНЕСОМ МАСЕЯНОМ

Р е з ю м е

В статье на основании архивных материалов отражается дружба видного арменоведа Гр. Халатяна с выдающимся переводчиком Шекспира О. Масеяном, которая возникла в связи со стремлением создать полный перевод произведений Шекспира на армянский язык. Эти факты оставались до сих пор неизвестными.

До встречи они занимались Шекспиром—Гр. Халатян в 70-е годы в семинарии, а О. Масеян в начале 90-х годов. Встретившись в 1894 году в Москве, эти деятели решают в течение десяти лет издать все произведения Шекспира в переводах О. Масеяна.

Гр. Халатян задумал основать в Москве издание общеармянского ежемесячника с отделениями в Тифлисе, Тегеране и Константинополе, в котором он желает вместе с Масеяном печатать переводы Шекспира.

Весной 1895 года Гр. Халатян завершает подготовку издания журнала, однако исходя из политических соображений правительство не разрешает издание. Таким образом, ежемесячник и связанные с ним вопросы переводов потерпели провал.

Халатян и Масеян пытаются издавать переводы отдельно, и с этой целью на первых порах Масеян посылает в Москву для издания руко-

пись перевода «Макбета». Но из-за недостатка материальных средств, а также неупорядоченности издательского дела издание «Макбета» также не осуществляется.

Благородные намерения выдающихся литературных деятелей остались незавершенными, однако их интенсивные усилия не прошли бесследно.

В статье освещена та большая и трудная работа, которая проложила путь для дальнейшего развития армянского шекспироведения.